ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանի խոսքը ԱՍԱԼԱՅԻ մարտիկների հյուրընկալությանը

Հարգելի հյուրեր, ներկաներ

Ողջունում եմ ձեզ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում: Մեր համալսարանի ուսանողական խորհուրդը միջոցառումների շարք է սկսում՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին: Այս համատեքստում մեզ համար մեծ պատիվ է Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակին հյուրընկալելը:

Մենք հավատացած ենք, որ երիտասարդ սերունդը պետք է լավ ծանոթ լինի իր պատմությանը, իր ժողովրդին պատուհասած դժբախտություններին, ինչպես նաև պատմության նշանակալի դեպքերին ու դրվագներին: Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցը մեզ համար ավելին է, քան սոսկ հիշատակի, ոգեկոչման օր լինելը:

Հարգելի ուսանողներ

Հուսով եմ, որ այսօրվա հանդիպումը Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի ներկայացուցիչների հետ կանցնի բովանդակային մթնոլորտում, դուք հնարավորություն կունենաք ծանոթանալու լեգենդար այս կառույցի գործունեությանը, առավել նշանակալի դեպքերին:

Շնորհակալություն